

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱՌԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՅԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի/ այսուհետ՝ Մարզպետարան/ տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության /այսուհետ՝ Վարչություն/ լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի / այսուհետ՝ Մարզպետ/ որոշումներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:
2. Վարչությունը մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, որը ղեկավարում է վարչության պետը:  
Վարչության պետը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

### II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Վարչությունն իր լիազորությունների շրջանակներում՝

ա) համակարգում և վերահսկում է Մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը.

բ) ապահովում է տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանի աշխատակազմի փոխադարձ կապը.

գ) ապահովում է Մարզի խորհրդի գործունեության հետ կապված կազմակերպական աշխատանքները .

դ) օրենքով սահմանված կարգով առաջարկություն է ներկայացնում Մարզպետին՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ նշանակելու, նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու և գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակելու մասին.

ե) վերահսկում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման, անցկացման աշխատանքները.

զ) ապահովում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և վարչական հսկողության.

է) վերահսկում է տեղական ինքնակառավարման մարմինների ամենամյա աշխատանքային ծրագրի կազմման աշխատանքները և ներկայացնում է Մարզպետին.

ը) վերահսկում է համայնքների ղեկավարների սեփական և պետության պատվիրակած լիազորությունների և համայնքների ավագանիների լիազորությունների իրականացման աշխատանքները.

թ) վերահսկում և ապահովում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի համապատասխանությունը օրենքներին, ցույց է տալիս մեթոդական օգնություն այդ ակտերի ընդունման աշխատանքներին.

ժ) վերահսկում է Մարզի տարածքում հասարակական կարգի պահպանման և ամրապնդման նպատակով ներքին գործերի և ազգային անվտանգության ոլորտի հանրապետական գործադիր

մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներին հանձնարարականներ և կարգադրություններ տալու աշխատանքները.

ժա)ուսումնասիրում է արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտի հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարների կողմից Մարզպետի համապատասխան հանձնարարականների և կարգադրությունների կատարման ընթացքը և արդյունքների մասին Մարզպետին ներկայացնում տեղեկատվություն և առաջարկություններ.

ժբ)վերահսկում է մարզի վարչական տարածքներում անտառային հրդեհների մարման, մասնագիտացված ծառայությունների, անտառօգտագործողների աշխատանքները.

ժգ)Մարզպետի հանձնարարությամբ Մարզի տարածքում հարկային մարմինների գործունեության, կապի, էլեկտրամատակարարման, ջրահեռացման և գազամատակարարման ծագած խնդիրների լուծման առնչությամբ համապատասխան հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներից սահմանված կարգով ստանում է տեղեկատվություն և արդյունքների մասին զեկուցում Մարզպետին.

ժդ)վերահսկում է Մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման աշխատանքները, հետևում հանձնարարականների կատարման ընթացքին և այդ մասին Մարզպետին ներկայացնում տեղեկատվություն.

ժե)վերահսկում է Մարզի տարածքում համապատասխան մարզային ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ արտակարգ իրավիճակների կողմից կազմակերպվող և մարզպետի կողմից համակարգվող աշխատանքներին, ինչպես նաև օպերատիվ բնույթի միջոցառումների իրականացմանը.

ժզ)հետևում է պետության կողմից համայնքին պատվիրակված ինչպես նաև պարտադիր լիազորությունների կատարման ընթացքին, Մարզպետին ներկայացնում է տեղեկատվություն և առաջարկություն.

ժկ)վերահսկում է հանրապետական համապատասխան ծրագրերով նախատեսված, ինչպես նաև օպերատիվ բնույթի միջոցառումների իրականացման աշխատանքները.

ժլ)վերահսկում և ապահովում է Մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերի կադրային գործի վարման և մեթոդական ղեկավարման աշխատանքները.

ժմ)վերահսկում է համայնքների ղեկավարների աշխատակազմերի վերակազմակերպման, կառուցվածքային փոփոխությունների և լուծարման ժամանակ համայնքային ծառայության հետ կապված հարցերի վերաբերյալ տարածքային կառավարման նախարարություն փոփոխությունների մասով տեղեկատվություն ներկայացնելու աշխատանքները.

ի)սահմանված կարգով ընթացք է տալիս համայնքային ծառայության վերաբերյալ առաջարկություններին, դիմումներին ու բողոքներին.

իա)վերահսկում և ապահովում է համայնքային ծառայության պաշտոնների գրանցամատյանի վարման աշխատանքները ըստ սահմանված կարգի.

իբ)վերահսկում է համայնքի ղեկավարների և ավագանու գործունեության հրապարակայնության ապահովումը /լրատվական միջոցներով/ .

իգ)վերահսկում և կազմակերպում է մարզի համայնքներում համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթները.

իդ)մարզի համայնքի ղեկավարների որոշումների հիման վրա վերահսկում և ապահովում է վերապատրաստում անցած համայնքային ծառայողների ատեստավորումը.

իե)առաջարկություններ է ներկայացնում ՀՀ տարածքային կառավարման նախարարին մարզի համայնքների համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու վերաբերյալ.

իզ)վերահսկում է համայնքային ծառայողների , ինչպես նաև ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող և պաշտոնից ազատված անձանց վերաբերյալ տեղեկությունների ամփոփման և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացնելու աշխատանքները.

իէ)ուսումնասիրում է համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումների համապատասխանությունը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին.

իը)մասնակցում է միջհամայնքային միավորումների ձևավորման և համայնքների խոշորացման կազմակերպման աշխատանքներին.

իթ)առաջարկություններ է ներկայացնում Մարզպետին տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, գործողությունները և անգործությունը դատարանում բողոքարկելու վերաբերյալ.

լ)առաջարկություններ է ներկայացնում Մարզպետին Մարզի աշխարհագրական օբյեկտների անվանափոխման և անվակոչման փաստաթղթերը աշխարհագրական օբյեկտների անվանումների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին ներկայացնելու վերաբերյալ.

լա)աջակցում է զինվորական կոմիսարիատներին զորահավաքային աշխատանքների իրականացման գործում, սահմանապահ զորքերին պետական սահմանի պահպանության գործում անհրաժեշտ աջակցության տրամադրման աշխատանքներին.

լբ)մասնակցում է զինված ուժերի զորահավաքային պատրաստության և զորակոչի իրականացման, զորակոչային տարիքի երեխաների հաշվառման աշխատանքներին , պահեստ արձակված անձանց, նրանց ընտանիքների անդամների սոցիալական, իրավական պաշտպանվածության ուղղությամբ ՀՀ օրենսդրության պահանջների իրականացման նպատակով համապատասխան միջոցառումների կազմակերպման աշխատանքներին.

լգ)իր իրավասության սահմաններում իրականացնում է անհրաժեշտ աջակցություն Սահմանապահ զորքերին՝ պետական սահմանի պահպանության գործում .

լդ)վերահսկում է պաշտպանության նպատակով տարածքի և հաղորդակցության ուղիների նախապատրաստման միջոցառումների, զորահավաքային ծրագրերի ու խնդիրների իրականացում աշխատանքները.

լե)մասնակցում է տարածքային պաշտպանական միջոցառումների ծրագրավորման աշխատանքներին և օժանդակում դրանց իրագործմանը.

լզ) մասնակցում է համայնքների քառամյա ծրագրերի մշակման , Մարզի զարգացման և այլ ծրագրերի կազմման, մշակման, ինչպես նաև այդ ծրագրերի մոնիտորինգի և գնահատման աշխատանքներին.

### **III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ**

4.Վարչությունը կազմված է տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերով բաժնից և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման խմբից:

5.Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է Մարզպետարանի աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված կազմով:

6.Վարչության գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի ղեկավարը:

7.Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Վարչության պետը:

8.Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, քաղաքացիական ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթները սահմանվում է նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: